25.720
C.1930/137

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

# ԱՅԳԵ-ԲԱՆՋԱՐԱԲՈՒԾԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

Библиотека
Института
Востоковедения
Академии Наук
СССР

334
Ա-52

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ «ԱՅԳԳԻՆԿՈՈՊ»-Ի

ԵՐԵՎԱՆ 1929

Սa1902 Ա
334
Ա-52
C.1930/137
05 JAN 2010
БИБЛИОТЕКА ИНСТИТУТА ВОСТОКОВЕДЕНИЯ Академии Наук СССР

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## Այգե-բանջարաբուծական Գյուղատնտեսական Կոոպերատիվ Ընկերության

........................................ գավառամաս

........................................ գավառ

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍ

1. ........................................ Այգե-բանջարաբուծական Գյուղատնտեսական Ընկերությունը հիմնվում է Գյուղատնտեսական Կոոպերացիայի վերաբերյալ գործող օրենքների հիման վրա և գործում է ........................................

........................................

........................................

### Ինչու համար է կազմակերպվում Ընկերությունը

2. Այգե-բանջարաբուծական Կոոպերատիվ Ընկերությունը կազմակերպում է՝ Ընկերության գործունեության շրջանում այգեգործությամբ և բանջարաբուծությամբ զբաղվող աշխատավորական գյուղացիական տնտեսություններին միավորելու միջոցով,— այդ տնտեսություններում

25720
08. 02. 2013

մշակման կատարելագործված ձևեր մտցնելու և համայնորեն արտադրելու համար, նրանց արտադրանքն ավելի ձեռնտու պայմաններով վաճառահանելու, այլ և մատակարարելու նրանց այն բոլոր միջոցները, վորոնք անհրաժեշտ են այգեգործական-բանջարաբուծական տնտեսություններ վարելու համար։

### Ինչ աշխատանք է կատարում Ընկերությունը

3. Յերկրորդ հոդվածում նշված նպատակներն իրագործելու համար Ընկերությունը.—

ա) Սահմանում է իր բոլոր անդամների տնտեսությունների համար պարտավորեցուցիչ կանոնագրություններ ու կանոններ՝ այգիների և բանջարանոցների մշակման լավագույն միջոցների գործադրման և այդ մշակույթների վնասատուների ու հիվանդությունների դեմ պայքարելու համար։

բ) Կազմակերպում է մշտական ոգնություն՝ իր անդամների տնտեսությունները բարելավելու նպատակով անհրաժեշտ ձեռնարկումները կիրառելու համար և ստուգում է, թե յուրաքանչյուր անդամը ճիշտ է վարում արդյոք իր տնտեսությունը։

գ) Կազմակերպում է ցուցադրական այգիներ ու բանջարանոցներ՝ ինչպես իրեն՝ Ընկե-



ՊԵՏ ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГСС Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
Ա. Мясникян
61917-67

րության, նույնպես և իր անդամների այգիներում և բանջարանոցներում.

դ) Իր ընկերության անդամներից կազմակերպում է հատուկ խմբեր՝ ինչպես այգիներում վորոշ աշխատանքներ կատարելու (արմատներ կտրելը և այլն), նույնպես և վնասատուների դեմ ընդհանուր ընային պայքար տանելու համար.

յե) Կազմակերպում է բանջարաբուծական կուլտուրաների, պտղատու ծառերի, խաղողի ու սերմերի տնկարաններ, համաձայնեցնելով տեղական հողային մարմինների հետ.

զ) Կազմակերպում է սերմազտիչ և վարձակայաններ.

է) Անհրաժեշտության դեպքերում կատարում է այգե-բանջարաբուծական տնտեսությունների բարելավման հետ կապված վոռոգման աշխատանքներ.

ը) Կապալով կամ ոգտագործման հիմունքներով վերցնում է այգե-բանջարաբուծական հողամասեր՝ դրանցում այգե-բանջարաբուծ. համայնական տնտեսություն վարելու համար.

թ) Կազմակերպում է գյուղական և կոլեկտիվ այգիների տնկում.

ժ) Կազմակերպում է միասնական վերամշակման կայաններ (պտուղների չորանոցներ, գինու և օղու գործարաններ, պահածոների

գործարաններ, կոմբինատներ, թթու պահելու կայաններ և այլն).

ժա) Ընկերության անդամներին մատակարարելու և իրեն՝ Ընկերության տնտեսության համար հայթայթում է՝ տնկանյութեր, սերմորայք, պարարտանյութեր, մշակույթների վնասատուների և հիվանդությունների դեմ պայքարելու միջոցներ, այգե-բանջարաբուծական հատուկ ինվենտար, արտադրական մասնագիտական գործիքներ ու մեքենաներ, այլև այգե-բանջարաբուծ. տնտեսության ու դրան օժանդակ արտադրության համար անհրաժեշտ այլ իրեր և նյութեր.

ժբ) Վաճառահանում է թե ընկերության և թե իր անդամների այգե-բանջարաբուծության արտադրանքը, որի համար և կոնտրակտացիայի յե յենթարկում իր անդամների այգիների բերքը, կազմակերպում է բերքը հավաքելու, պահելու և արտադրանքը վերամշակելու գործը.

ժգ) Կառուցում կամ կապալով է վերցնում նկուղներ, պահեստներ և արհեստանոցներ՝ այգեբանջարաբուծական ինվենտարի ու մեքենաների վերանորոգման, այլև օժանդակ իրեր պատրաստելու համար (ամաններ, ամանանյութեր և այլն).

ժդ) Պետական, կոոպերատիվ, հասարակական կազմակերպություններից և իր անդամներից հայթայթում է դրամական ու ապրանքային միջոցներ և ընդունում է ավանդներ.

ժե) Այգե-բանջարաբուծական մշակույթները և այդ տնտեսությունները ռացիոնալ վարելու վերաբերյալ տարածում է օգտակար գիտելիքներ, որի համար հրավիրում է մասնագետներ. անդամներին ուղարկում է մասնագիտական դասընթացներ, կազմակերպում է դասախոսություններ, զրույցներ, ցուցահանդեսներ, և այգեգործության ու բանջարաբուծության վերաբերյալ տարածում է տպագրված հրատարակություններ.

ժզ) Կազմակերպում է չքավոր տնտեսությունների վարկավորման ու կոոպերացման, հիվանդության դեպքում փոխադարձ օգնության, հաշմանդամության, տարերային աղետների, ինչպես և Ընկերության անդամների կենցաղային պայմանների բարելավման ֆոնդեր.

ժէ) Պաշտպանում է Ընկերության անդամների շահերը բոլոր հիմնարկներում և կազմակերպություններում.

ժը) Ձեռք է առնում նաև այլ միջոցներ, որոնք օժանդակում են այգե-բանջարաբուծական տնտեսության զարգացման։

**Ընկերության իրավունքներն ու պատասխանատվությունը**

4. Ընկերությունն օգտվում է իրավական

անձի բոլոր իրավունքներով և, համաձայն օրենքների, կարող է օտարացնել կամ ձեռք բերել գույքեր, պայմանագրեր կնքել, ընդունել ու տալ մուրհակներ և այլ պարտավորություններ, ինչպես և Ընկերության շահերի պաշտպանության համար միջնորդությամբ ու հայտարարությամբ հանդես գալ պետական, հասարակական և դատական կազմակերպություններում։

5. Ընկերությունը կարող է միանալով այլ կոոպերատիվ կազմակերպությունների հետ միություն կազմել, ինչպես և անդամագրվել արդեն գոյություն ունեցող կոոպերատիվ Միություններին, վորոնք կարող են աջակցել հասնելու իր նպատակին։

6. Իր պարտավորությունների հանդեպ ընկերությունը պատասխանատու յե իր ամբողջ գույքով։

7. Ընկերությունն ունի իր անվան կնիքը։

---

## II. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԸ, ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ, ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՅԵՎ ՆՐԱ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

### Ով կարող է Ընկերության անդամ լինել

8. Ընկերության կազմի մեջ պետք է լինեն 10 անդամից վոչ պակաս։

Ընկերության անդամ կարող են լինել. ա)



16 տարեկանից վոչ պակաս յերկու սեռի բոլոր քաղաքացիները, վորոնք Ընկերության գործունեության շրջանում զբաղված են այգեգործության և բանջարաբուծության ճյուղերի հետ կապ ունեցող աշխատավորական տնտեսությամբ կամ արտադրությամբ, բ) իրավական անձինք, այն է՝ կոմունաները, արտելները, ընկերությունները ու համայնքները, վորոնք ունեն աշխատավորական այգե-բանջարաբուծական տնտեսություններ, կամ դրանց հետ կապված արտադրություն։

9. Ընկերության անդամ չեն կարող լինել այն անձինք, վորոնք անդամ են այլ միատեսակ կոոպերատիվ կազմակերպության։

### Անդամներ ընդունելու կարգը

10. Ընկերության մեջ անդամների ընդունելությունը կատարվում է Ընդհանուր ժողովի, կամ նրա լիազորությամբ՝ Վարչության կողմից։ Ընդունելության համար Վարչության մերժումը կարող է բողոքարկվել Ընդհանուր ժողովին՝ վերստուգիչ Հանձնաժողովի միջոցով, վորն տալիս է իր յեզրակացությունը տրված բողոքի առթիվ։

11. Ընկերության մեջ մտնողն անդամ ընդունվելու մասին ներկայացնում է համապատասխան հայտարարություն և ստորագրություն

է տալիս այն մասին, վոր նա պարտավորվում է կիրառել Ընկերության կանոնադրությունը և իր վրա պարտականություն է վերցնում համաձայն կանոնադրության 16-րդ հոդվածի, և վոր նա անդամ չէ մի այլ միատեսակ կոոպերատիվ կազմակերպության։

12. Այն անձինք, վորոնք ստորագրել են ներկա կանոնադրության նախագիծը, համարվում են Ընկերության հիմնադիրներ և մտնում են նրա անդամների թվի մեջ առանց Ընդհանուր ժողովի կամ Վարչության հատուկ վորոշման։

13. Ընկերության հիմնադիրներ չեն կարող լինել առևտրականներ, դնող-վաճառողներ, վաշխառուներ և այլ անձինք, վորոնք վարձու աշխատանքից ստանում են հիմնական միջոցներ, և՝ ընդհանրապես ընտրական իրավունքից զրկվածները նույնպես և անչափահասները։

### Ինչպիսի պարտականություններ է կրում Ընկերության յուրաքանչյուր անդամը

14. Ընկերության յուրաքանչյուր անդամը պարտավոր է կատարել՝ Ընկերության կանոնադրությունը, Ընդհանուր ժողովի վորոշումները և ընդհանրապես Ընկերության ընտրովի մարմինների բոլոր որինական պահանջները։

15. Ընկերության մեջ մտնելիս Ընկերության յուրաքանչյուր անդամը պարտավոր է



մուծել մուտքի և անդամավճարներ՝ համաձայն կանոնադրության 29 և 30 հոդ.։

16. Ընկերության պարտավորությունների և վնասների համար նրա յուրաքանչյուր անդամը պատասխանատու է իր գույքով՝ իր փայի ............ պատիկ չափով։

ԾԱՆՈԹ.—Ընկերության մեջ մտնողը պատասխանատվություն է կրում նաև Ընկերության պարտավորությունների հանդեպ վորոնք գոյացել են նրա մտնելուց առաջ։

17. Ընկերության յուրաքանչյուր անդամը պարտավոր է իր անտեսության այգե-բանջարաբուծական ամբողջ արտադրանքը հանձնել նկերության։

18. Ընկ. յուրաքանչյուր անդամը պարտավոր է իր ժամանակին և բարեխղճորեն անձնական աշխատանքով կատարել Ընկերությունում կազմակերպված համայնական արտադրական աշխատանքները։

### Ինչ իրավունքներով է օգտվում Ընկերության յուրաքանչյուր անդամը

19. Ընկերության յուրաքանչյուր անդամն ունի հետևյալ իրավունքները —

ա) Վճռական ձայնով մասնակցել Ընդհանուր ժողովներին.

բ) Ընտրվելու Ընկերության բոլոր ընտրո-

վի պաշտոններում բացառությամբ այն անձանց, վորոնք նշված են 55-րդ հոդվածի 1-ին ծանոթության մեջ.

գ) Ընդհանուր ժողովի կողմից սահմանված պայմաններով ոգտվելու Ընկերության բոլոր ձեռնարկություններից և կառուցումներից.

դ) Ոգտվել Ընկերությունում ծառայող մասնագետների (գյուղատնտեսների և այլն) ցուցմունքներից.

յե. Վարչության սխալ գործունեության և նկատած թերությունների մասին հայտարարություններ տալ Վերստուգիչ Հանձնաժողովին և պահանջել այդպիսին քննության յենթարկելու։

### Անդամների հեռանալն ու հեռացումը

20. Ընկերության յուրաքանչյուր անդամ իրավունք ունի հեռանալ Ընկերությունից, այդ մասին գրավոր հայտարարություն տալով Վարչության։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Հեռացած անդամը կարող է նորից ընդունվել ընկերության մեջ՝ սահմանված կարգով (հոդվ 10-րդ)։

21. Կանոնադրությունը Ընդհանուր ժողովի վորոշումները, Վարչության որինական պահանջները, Ընկերության հանդեպ հանձն առած պարտավորությունները չկատարելու և Ընկ. հասցրած վնասների համար Ընդհանուր ժողովը



կարող է անդամին հեռացնել ընկերությունից։

22. Հեռացված անդամը կարող է նորից վերընդունվել միայն Ընդհանուր ժողովի վորոշմամբ։

23. Հեռացած կամ հեռացված անդամները և կամ մահացած անդամի ժառանգները անդամներին համահավասար պատասխանատու յեն Ընկերության այն պարտավորությունների հանդեպ, վորոնք գոյացել են մինչև գործառնական տարվա վերջը, վորի միջոցին տեղի յե ունեցել հեռանալը, հեռացումը կամ մահացումը՝ մեկ տարվա ընթացքում։

24. Ընկերության անդամի մահացման դեպքում, մահացած անդամի իրավունքներն ու պարտավորությունները կիրառվում են նրա ժառանգի կողմից՝ մինչև այն գործառնական տարվա վերջը, վորի ընթացքում մահացել է անդամը։ Սակայն յեթե ժառանգն վորպես անդամ չի մտել ընկերության մեջ—նա չի կարող վճռական ձայնի իրավունք ունենալ Ընդհանուր ժողովում և ընտրովի պաշտոններ վարել Ընկերությունում։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Մահացած անդամի ժառանգը կարող է Ընկերության անդամ ընդունվել առանց կանոնադրությամբ նախատեսնված նոր վճարումներ մուծելու։

25. Ընկերության հեռացած կամ հեռաց-

ված անդամի, ինչպես և մահացած անդամի ժառանգի, որը չի մտել ընկերության մեջ,— փայավճարները վերադարձվում են յերեք ամիս անց՝ տվյալ տարվա տարեկան հաշվետվությունը հաստատվելուց հետո, որի ընթացքում դուրս է մնացել անդամը։

Դրա հետ միասին նրանցից գանձվում է նրանց բաժին ընկնող վնասը, որ կրել է ընկերությունը և կամ վճարվում է նրանց հասանելիք յուրաքանչյուր անդամի շահի հավասար բաժինը։ Սակայն նրանք իրավունք չունեն ստանալու ընկերության այլ միջոցներն ու գույքերը, բացի նրանից, որոնք պայմանագրային հիմունքներով հանձնված է յեղել Ընկերության։

26. Յեթե դուրս մնացած անդամի պատասխանատվության ժամկետը չի լրացել (հոդ. 23), իսկ Ընկերությունը դադարեցնում է իր գործունեությունը (լուծարքվում է), ապա բաժանման միջոցին հեռացած և հեռացված անդամին կամ մահացած անդամի ժառանգին իրավունք է վերապահվում Ընկերության գույքերի նկատմամբ և Ընկերության պարտավորությունների համար բոլոր անդամներին հավասար պատասխանատվություն է կրում։



# III ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

27. Ընկերությունը հիմնում է դրամագլուխներ.—ա. հիմնական, բ. պահեստի և գ. հատուկ։

28 Հիմնական դրամագլուխը կազմվում է՝ ընկերության անդամների փայավճարներից, մաքուր օգուտից արվող մասահանումներից, ինչպես և հիմնականան դրամագլխի համար փոխառության կարգով ստացված գումարներից և այլ մուտքերից։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1.—Հիմնական դրամագլխի փոխառու մասը, Ընկերության լուծարքի դեպքում Ընկերության բոլոր պարտքերը վճարելուց հետո միայն վերադարձվում է պահանջատերերին։ Այդ մասին համապատասխան պայմանագիր է կնքվում վարկատուների հետ։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2.—Ընկերությունը լուծարքվելիս որպես հիմնական դրամագլուխ ընկերության կողմից ստացված պետական գույքը վերադարձվում է նախնական տիրոջ։

29. Մուտքի վճարը սահմանվում է՝ Ընկերության յուրաքանչյուր անդամի համար .......... ռուբլի գումարով, իսկ յուրաքանչյուր իրավական անձի համար (կոմունա, արտել և այլն) .................. ռուբ։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Մուտքի վճարները չեն վերադարձվում ընկերության անդամներին։

30. Փայավճարը սահմանվում է ..........

..........

..........

..........

..........

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1.—Դրամական փայավճարը կարելի չէ փոխարինել բնանյութով։ Գնահատումն կատարվում է Վարչության կողմից շահագրգռված անդամի հետ միասին։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2.—Սակավազոր անդամների կողմից փայավճարները մուծվում են ժամկետներով, վորի կարգը սահմանում է Ընդհանուր Ժողովը։

31. Փայը չի կարող հանձնվել այլ անձի, ինչպես և Ընկերության անդամին ներկայացված վորև է պահանջ չի կարող վճարվել նրա կողմից Ընկերության մուծված փայավճարի գումարից։

32. Պահեստի դրամագլուխը կազմվում է՝ համաձայն Ընդհանուր Ժողովի վորոշման օգուտների պարտավորեցուցիչ մասահանումներից և այլ հատկացումներից ու ծառայում է ընկերության վնասները ծածկելու համար։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Պահեստի դրամագլխի 60%-ը դրվում է պետական փոխառությունների, իսկ մնացած 40%-ը՝ այլ հեշտ իրացվող արժեքների մեջ։



Օգուտներից պահեստի դրամագլխին արվող մասահանումի չափ սահմանվում է Ընդհանուր Ժողովի կողմից, սակայն այդպիսին չի կարող պակաս լինել մաքուր օգուտի մեկ հինգերորդ մասից։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Մասահանումը կարող է դադարեցվել, յեթե պահեստի դրամագլուխը հասնում է Ընկերության անդամների փայավճարի գումարի չափին։

33. Անդամների հատուկ մուծումների և մաքուր օգուտից մասահանում անելու ճանապարհով կարող են կազմվել հատուկ դրամագլուխներ,—բուժական միջոցների, համայնական վերամշակման ձեռնարկություններ կառուցելու, առանձին այգեգործություն կազմակերպելու, չքավորության օգնություն ցույց տալու և այլ նպատակների համար։ Մասահանման չափը և այդ դրամագլուխները ծախսելու կարգը սահմանում է Ընդհանուր Ժողովը։

---

## IV ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

34. Ընկերությունն աշխատանքներ է կատարում համաձայն Ներկա կանոնադրության և գյուղկոոպերացիայի վերաբերյալ գոյություն ունեցող ընդհանուր օրենքների ու դեկրետների։ Ընկերությունը գործառքներ է կատարում իր

անդամների հետ։ Դրա հետ միասին ընկերությունն իր անդամների համար հայթայթում ու վաճառահանում, ինչպես և մատակարարում կատարում է իր սիստեմի միջոցով, ինչպես անդամների հանձնարարությամբ նրանց հաշվին, նույնպես և իր հաշվին։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. — Ընկերության աշխատանքների ծրագիրն մշակում է Վարչությունը և հաստատում է Ընդհանուր Ժողովը։

35. Շրջակա ազգաբնակչության գյուղկոոպերացիային ծանոթացնելու և կոոպերացիայի մեջ ներգրավելու համար Ընկերությունը կարող է վաճառահանման և մատակարարման գործառքներ կատարել նաև կոոպերացիայի վոչ անդամների հետ, վորոնք պարապում են այգեգործությամբ և բանջարաբուծությամբ։ Սակայն այդ գործառքները պետք է կատարվեն վոչ ի վնաս Ընկ. անդամների հետ կատարվող գործառքների և ի վնաս կոոպերատիվի։ Վոչ-անդամների հետ յեղած գործառքների մասին վարչությունն առանձին հաշվետվություն է ներկայացնում Ընդհանուր Ժողովին։

36. Ընկերությունը կարող է կոնտրակտացիաներ կապելով ավանսավորել այգիներում և բանջարանոցներում կատարվելիք վորոշ աշխատանքները և նախավճարներ տալ անդամներին՝ իրենց տնտեսության արտադրանքը հանձնելու համար։



37. Ընդհանուր Ժողովը սահմանում է.— ա) կանոններ վերամշակման և վաճառահանման համար անդամներից մթերքներ ստանալու կարգի և հերթի մասին, բ) այն վորակը, վորին պետք է բավարարի անդամների կողմից հանձնվող մթերքները, գ) իրեն անդամներին վարկեր ու ավանսներ տալու կարգը, չափն ու պայմանները, դ) կանոններ հաշվեառման, աշխատանքի վարձատրության մասին, և այն անդամների տուգանքների չափը, վորոնք սպասարկում են համայնական արտադրության ու արտադրանքի համայնական վերամշակման, և վերջապես, յե) այլ կանոններ, վորոնք սահմանում են անդամների փոխհարաբերությունն Ընկերության հետ։

6919-67

---

## V ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՈԳՈՒՏՆԵՐՆ ՈՒ ՎՆԱՍՆԵՐԸ

### Օգուտների բաշխումը

38. Մաքուր օգուտը, համաձայն կանոնադրության 28, 32 և 33 հոդվածների, դրանից մասնահանումներ կատարելուց հետո, Ընդհանուր Ժողովի վորոշմամբ կարող է գործադրվել հետևյալ նպատակների.—

ա. Ընկերության միջոցով վաճառված մթերքների վերավճարի (դիվիդենտ), վորը սակայն չի կարող գերազանցել այդ գործառքից գոյացած օգուտի 25%-ը։

БИБЛИОТЕКА ИНСТИТУТ ՀՍՍՌ-Арм ССР им. А. Мясникяна Академии Наук

բ) Ընկերության անդամների, բանվորների և ծառայողների կենցաղի բարելավման և

գ) Ագրկուլտուր ֆոնդերի, չքավորության կոոպերացման, կուլտֆոնդի և այլ հատուկ ֆոնդերի կազմակերպման համար։

### Ընկերության վնասների ծածկումը

39. Յեթե Ընկերության վնասը պահեստի դրամագլխով չի ծածկվում, ապա այդ դեպքում Ընդհանուր ժողովը կարող է վորոշել վնասի ընդհանուր գումարը բաժանել Ընկերության բոլոր անդամների վրա, սակայն յուրաքանչյուր անդամի լրացուցիչ պատասխանատվության չափից վոչ ավելի։ Յուրաքանչյուրի կողմից յուր պարտքը վճարելու համար սահմանվում է ժամկետ։ Անդամներից վորևե մեկն իրենից հասնելիք գումարը չվճարելու դեպքում, այդպիսին ծածկվում է նրա փայավճարից, իսկ մնացորդը գանձվում է դատական կարգով։ Ինչ հնարավոր չի գանձել մի ադամից՝ այդպիսին Վարչության կողմից բաժանվում է Ընկերության մյուս անդամների վրա։

40. Յեթե վնասն առաջացել է Վարչության սխալ գործունեության ու անտնտեսավարության և Վերստուգիչ Հանձնաժողովի անփութության հետևանքով, ապա այդ վնասը պետք է ծածկվի հանցավորների հաշվին՝ փոխադարձ պատասխանատվությամբ։ Նրանցից գանձված գումարներով կամ լրացվում են դրամագլուխները, վորոնցից դուրս են գրված վնասները, կամ վճարվում են այն անդամներին, վորոնք համաձայն 39 հոդվ. ծածկել են վնասները։



---

## VI ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

41. Ընկերության Վարչական մարմինները հանդիսանում են Ընդանուր ժողովը և Վարչությունը.

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Յեթե Ընկերության անդամների թիվն անցնի 300-ից, ապա Ընդհանուր ժողովը կարող է հատուկ վորոշումով, պահպանելով 42—46 հոդվածներում նախատեսնված կանոնները, Ընկերության անդամներից հիմնել Լիազորների ժողով և և նրան հանձնել այն գործերի ու հարցերի լուծումը, վորոնք Ընդհանուր ժողովի վրա յեն դրվում, բացի ընկերության գործունեությունը դադարեցնելու, Լիազորների ժողովը վերցնելու և նրա համար սահմանված կանոնների փոփոխության խնդիրներից։ Լիազորների ընտրության կարգը, նրանց թիվը, լիազորությունների սահմանները և տևողությունը վորոշվում են Ընդհանուր ժողովի կողմից հաստատված առանձին կանոններով։

## Ա. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

### Ընդհանուր ժողով հրավիրելու կարգը

42. Ընկերության հերթական Ընդհանուր

ժողովները հրավիրվում են Վարչության կողմից՝ անհրաժեշտության դեպքում, սակայն ոչ ուշ, քան տարին մի անգամ։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Հաշվետու Ընդհանուր ժողովը հրավիրվում է գործառնական տարին վերջանալուց հետո ոչ ուշ, քան յերկու ամսից՝ հաշվետվությունը, նախահաշիվը, ծրագրները և այլ հարցերը հաստատելու համար։

43. Արտակարգ ընդհանուր ժողովներ հրավիրվում են. ա) Վարչության հայեցողությամբ, բ) Վեստուգիչ Հանձնաժողովի կամ Ընկերության անդամների մեկ քառորդ մասի պահանջմամբ և գ) այն Կոոպերատիվ Միության պահանջով, վորին անդամ է Ընկերությունը։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Յեթե ժողով գումարելու մասին յեղած հայտարարության որից յերկու շաբաթվա ընթացքում Վարչությունն ընդհանուր ժողով չի հրավիրում, ապա այդպիսին գումարում է Վերստուգիչ Հանձնաժողովը։

44. Անդամների հրավիրման կարգը կարող է սահմանել Ընդհանուր Ժողովը։ Ընկերության անդամները պետք է յերկու շաբաթ առաջ իրազեկ արվեն ժողովի գումարման օրվա, տեղի և ժողովին քննության առնվող հարցերի մասին։ Բացի դրանից Ընկենության Վարչության գրասենյակում համապատասխան հայտարարություն



և փակցվում Ընդհանուր ժողովի հրավիրման վերաբերյալ։

45. Ժողովն օրինական է համարվում՝ յեթե ներկա յեն Ընկերության բոլոր անդամների մեկ յերրորդ մասից ոչ պակաս։ Ընկերության գործունեության դադարեցման, կանոնադրության փոփոխման, լիազորական ժողով հիմնելու և վնասների բաժանման հարցերը քննելիս, անհրաժեշտ է Ընկերության բոլոր անդամների ոչ պակաս, քան յերկու յերրորդ մասի ներկայությունը։

46. Յեթե նշանակված օրը ժողովը չի կայանում, ապա ոչ ուշ, քան մեկ ամիս հետո յերկրորդ անգամ ժողով է նշանակվում նույն հարցերը քննելու համար։ Անկախ ներկա յեղող անդամների թվից, ժողովն օրինական է համարվում, բացի մի դեպքում, յերբ դրված է Ընկերության գործունեյության դադարեցման հարցը։ Այս հարցը յերկրորդ անգամ հրավիրված ժողովում էլ պետք է վորոշվի Ընկերության բոլոր անդամների ոչ պակաս, քան կեսի մասնակցությամբ։

### Ինչպես հարցեր են լուծվում Ընդհանուր ժողովի կողմից

47. Վորպես Ընկերության բարձրագույն մարմնի Ընդհանուր ժողովի իրավասության յենթակա յեն հետևյալ հարցերը։

ա) Վարչության, Վերստուգիչ Հանձնաժողովի անդամների, Ընկերության Լիազորների և դրանց թեկնածուների ընտրությունները, ինչպես և ժամանակից առաջ ընտրովի մարմինների անդամներին պաշտոնից հեռացնելը.

բ) Աշխատանքների ծրագրի, հաշվետվությունների, նախահաշիվների, հրահանգների և կանոնների քննությունն ու հաստատումը՝ Ընկերության վարչական մարմինների համար.

գ) Օգուտների բաշխումը և վնասները ծածկելու միջոցները.

դ) Ընկերության գործառնության վորոշումը և աշխատանքների կատարման կարգի սահմանումը.

յե) Ընկերության գործունեության վերաբերյալ առանձին հարցերի վերամշակման համար հանձնաժողովների ընտրությունը.

զ) Փայերի վճարման կարգի սահմանումը, Ընկերության դրամագլուխների կազմակերպման համար մասհանումների չափի վորոշումը և հատուկ դրամագլուխների ծախսման կանոնների հաստատումը.

է) Փոխառություններ կնքելու պայմանների և փոխատվություններ տալու կանոնների սահմանումը.

ը) Ընտրովի մարմինների անդամներին վարձատրություն սահմանելը.



թ) Վարչության և Վերստուգիչ Հանձնաժողովի վրա տրված բողոքների քննումը.

ժ) Ըրտովի մարմինների անդամների սխալ գործունեության վերաբերյալ հարցերի քննումը և նրանց դատական պատասխանատվության յենթարկելը.

ժա) Նոր անդամների ընդունելությունը, յեթե Վարչությունը այդ անելու լիազորված չե, ինչպես և անդամների հեռացումը և հեռացվածների վերընդունելությունը.

ժբ) Ընկերությունն այլ ընկերություններին կամ միություններին անդամագրվելու հարցի քննությունը.

ժգ) Կանոնադրության լրացումն ու փոփոխումը.

ժդ) Ընկերությունը լուծարքի յենթարկելու հարցի քննումը և

ժե) Վարչության իրավասությունից դուրս բոլոր հարցերի քննումը։

### Ընդհանուր ժողովի աշխատանքների կարգը

48. Ընդհանուր ժողովը բացում է Վարչության նախագահ կամ նրա տեղակալը.

49. Ընդհանուր ժողովը ներկա յեղողների միջից ընտրում է ժողովի նախագահ և քարտուղար։ Վարչության, Վերստուգիչ Հանձնաժողովի անդամներից և Ընկ. ծառայողներից վոչ մեկը չի կարող ժողովի նախագահ ընտրվել։

50. Ընկերության յուրաքանչյուր անդամն Ընդհանուր ժողովում օգտվում է միայն մի ձայնի իրավունքով, վորը կարող է տրվել միայն նրա ընտանիքի անդամին։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1. — Իրավական անձինք ժողովին մասնակցում են իրենց մեկ ներկայացուցչի միջոցով, վորը միայն մի ձայն ունի, բացի ընկ. անդամ կոլտնտեսություններից, վորոնց 16 տարեկանից բարձր բոլոր անդամները վճռական ձայնի իրավունքով մասնակցում են ընդհանուր ժողովին։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2. — Վարչության և Վերստուգիչ Հանձնաժողովի անդամները, վորոնք Ընկերության անդամ են, ժողովին մասնակցում են վճռական ձայնի իրավունքով, բացի հետևյալ հարցերից.— ա) Նրանց աշխատանքների գնահատման, բ) Վարչության և Վերստուգիչ Հանձնաժողովի գործունեության վերաբերյալ հաշվետվության հաստատման, գ) Նրանց վարձատրություն նշանակելու, դ) Ժամանակից առաջ նրանց պաշտոնից հեռացնելու և յե) Նրանց դատական պատասխանատվության յենթարկելու վերաբերյալ։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 3. — Ընդհանուր ժողովին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են մասնակցել ընկերության անդամների ընտանիքների անդամները, իրավական անձանց անդամները և Վարչության հրավիրած անձինք։



51. Ընդհանուր ժողովում հարցերը վորոշվում են բաց քվեարկությամբ, ձայների պարզ մեծամասնությամբ։ Իսկ՝ ա) Կանոնադրության լրացման և փոփոխման, բ) Հատուկ դրամագլուխներին պարտավորեցուցիչ մուծումներ անելու, գ) Անդամներին հեռացնելու և հեռացվածներին վերընդունելու, դ) Ընտրովի անձանց դատական պատասխանատվության յենթարկելու և յե) Ընկերության գործունեության դադարեցման հարցերը վորոշվում են ընկերության ներկա գտնվող անդամների 2/3 մեծամասնությամբ։

Ձայների հավասարության դեպքում հարցերը համարվում են չլուծված և փոխադրվում են հետևյալ Ընդհանուր ժողովին։

52. Ընդհանուր ժողովի վորոշումները գրանցվում են արձանագրությունների հատուկ գրքում և ստորագրում են ժողովի նախագահն ու քարտուղարը և Ընդհանուր ժողովի կողմից դրա համար լիազորված ընկերության անդամներից վոչ պակաս, քան յերեք անդամները։

Արձանագրության կցվում է ժողովի նախագահի կողմից հաստատված ժողովին մասնակցող անդամների ցուցակը։

Ընդհանուր ժողովի վորոշումները պարտավորեցուցիչ են ընկերության թե ներկա յեղած և թե բացակայող անդամների համար։ Իսկ

կանոնադրության փոփոխման վերաբերյալ վորոշումներն ուժի մեջ յեն մանում սահմանված գրանցումից հետո։

53. Ընդհանուր Ժողովում Ընկերության յուրաքանչյուր անդամ իրավունք ունի արտահայտել իր առանձին կարծիքը և պահանջել այդպիսին մտցնել արձանագրության մեջ։

## Բ. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ

54. Վարչությունն Ընկերության գործադիր մարմինն է։ Նա վարում է ընկերության բոլոր գործերը համաձայն կանոնադրության և Ընդհանուր Ժողովի վորոշումների, և հանդես է գալիս Ընկերության անունից՝ առանց այդ մասին հատուկ լիազորության։

55. Վարչությունը բաղկացած է յերեք հոգուց, վորոնք ընկերության անդամներից ընտրվում են Ընդհանուր Ժողովում մեկ տարի ժամանակով։ Իսկ Վարչության ժամանակավորապես բացակայող և հեռացած անդամին փոխարինելու համար Ընդհանուր Ժողովի կողմից ընտրվում են յերկու թեկնածուներ։

ԾԱՆՈԹ.—1. Վարչության անդամներ չեն կարող լինել առևտրականները, գնող—վաճառողները, վաշխառուները և այն անձինք, վորոնք ապրուստի հիմնական միջոցները ստանում են ուրիշի աշխատանքի շահագործումից, և ընտրական իրավունքից զրկվածներն ու անչափահասները.



ԾԱՆՈԹ.—2. Վարչության կազմի մեջ չեն կարող մտնել Վարչության և Վերստուգիչ Հանձնաժողովի անդամների ամուսինները, հայրերն ու վորդիները, քույր և յեղբայրները, պապերն ու թոռները և մոտիկ ազգականները։

ԾԱՆՈԹ.—3. Վարչության վարձու անդամների քանակը վորոշում է Ընդհանուր Ժողովը։

56. Ընդհանուր Ժողովը կարող է հանձնարարել Վարչության իր միջից Նախագահ ընտրելու։ Վարչությունն ընտրում է Նախագահի տեղակալ և պարտականությունները բաժանում է բոլոր անդամների միջև։

### Վարչության պարտականությունները

57. Վարչության վրա դրված են հետևյալ պարտականությունները.—

ա) Ընկերության ղեկավարությունը և տնտեսական գործերի վարումը.

բ) Ընկերության տնտեսության բոլոր օժանդակ ձեռնարկությունների ղեկավարումը.

գ) Վճարումների, անդամավճարների, ավանդների ընդունումը, վարկեր ստանալը, հաշիվներ մաքրելը, ընկերություն մուծված գումարների պահպանումը.

դ) Մուրհակներ, լիազորագրեր տալը, պայմանագրեր և այլ պայմաններ, ինչպես և Ընդհանուր ժողովի կողմից սահմանված գումարով փոխառություններ կնքելը.

յե) Ընկերության ոգտին գանձումներ կատարելը, ընկերության ներկայացված հայցերին և վեճերին դատարանում պատասխանելը, ընկերության գործերի առթիվ հարաբերության մեջ մտնելն ու գրագրություն ունենալը։

զ) Ընկերության անդամներից ստացված մթերքների ընդունումը և գնահատումը, ինչպես ընկերության տնտեսության, նույնպես և անդամների տնտեսության արտադրանքների վաճառահանումն ու պահպանումը.

է) Ընկերության անդամների այգե-բանջարաբուծական տնտեսությունների համար անհրաժեշտ նյութեր և իրեր հայթայթելը.

ը) Ընկերության համար անհրաժեշտ գույքերի գնումն ու կապալառումը.

թ) Միասնորեն ոգտագործման համար այգե-բանջարաբուծական հողեր, կամ գյուղական այգիներ և բանջարանոցներ տնկելու համար հողամասեր կապալով վերցնելն ու ստանալը.

ժ) Ընկերության գույքերի ապահովագրումը, պահպանումն ու վերանորոգումը.

ժա) Տնտեսական—արտադրական ծրագիր, նախահաշիվ, յեռամսյա և տարեկան հաշվետվություններ ու հրահանգները կազմելն՝ ընկերության ընդհանուր ժողովին ներկայացնելու համար.

ժբ) Ընկերության անդամների միջև աշխատանքների բաժանումը և միասնորեն աշխատանքների կատարումն՝ համաձայն Ընդհանուր ժողովի վորոշման.



ժգ) Նոր անդամների ընդունելությունը, յեթե այդ առթիվ կա Ընդհանուր ժողովի լիազորությունը, Ընկերության անդամների ցուցակները պահելը, միասնորեն արտադրության մեջ յուրաքանչյուր անդամի կատարած աշխատանքի հաշվառումը, ցույց տալով կատարված աշխատանքն ու ժամանակը.

ժդ) Աշխատանքի վարձատրության գնահատում կատարելը.

ժյե) Ագրոկուլտուր—արտադրական աշխատանքների կատարման հաշվառումը՝ համաձայն արտադրական ծրագրի.

ժզ) Ժամանակավոր ու սեզոնային աշխատավորների վարձումը և դրանց արձակումը.

ժե) Ընկերության գործավարության և հաշվապահության վարումն ու ղեկավարումը.

ժը) Ընկերության Ընդհանուր ժողովների հրավիրումը և

ժթ) Համաձայն կանոնադրության և Ընդհանուր ժողովի վորոշումների՝ բոլոր մյուս պարտականությունները։

### Վարչության պատասխանատվությունը

58. Վարչությունը պատասխանատու յե Ընկերության առաջ Ընդհանուր ժողովի բոլոր

կանոնների, հրահանգների և վորոշումների անշեղ իրագործման համար։ Իրենց պարտականությունները խախտող Վարչության անդամները ամբողջ գույքով պատասխանատու յեն իրենց հանցանքով Ընկերության կրած վրասների համար։

Ընդհանուր Ժողովի կողմից Վարչության վորևե անդամին հանձնարարված գործերի համար Վարչության մյուս անդամները պատասխանատու չեն, յեթե նրանք չեն կարողացել կանխել վնասները։

Յեթե Վարչության նիստում Վարչության վորևե անդամը չի համաձայնվի մեծամասնության հետ և արձանագրության մեջ կմտցնի իր հատուկ կարծիքը, ապա դրանով նա վերցնում է իր վրայից Վարչության ընդունած վորոշման աոթիվ ամբողջ պատասխանատվությունը։

59. Իրենց պարտականությունների մեջ թերացող Վարչության անդամներն Ընդհանուր Ժողովի կողմից կարող են ժամկետից առաջ հեռացվել պաշտոնից։ Իսկ դրանց ժամանակավոր հեռացումը հնարավոր է Վարչության և Վերստուգիչ Հանձնաժողովի միացյալ նիստի վորոշմամբ։

### Վարչության աշխատանքների բաշխումը

60. Վարչությունը նիստեր է գումարում անհրաժեշտության դեպքում։ Նիստը օրինական է համարվում, յեթե ներկա յեն Վարչության յերկու անդամները, նույն թվում նախագահը կամ տեղակալը։

61· Վարչության նիստերում հարցերը վորոշվում են ձայների պարզ մեծամասնությամբ։ Վարչության վորոշումները գրանցվում են առանձին գրքում և ստորագրվում են անդամների կողմից։ Վարչության նիստերին վոչ վճռական ձայնով կարող են մասնակցել Վերստուգիչ Հանձնաժողովի անդամները, դրանց թեկնածուները և Վարչության կողմից հրավիրված այլ անձինք։

62. Ընկերության անունից տրվող լիազորագրերը, պարտավորությունները, անդորրագրերը, մուրհակները և այլ դրամական փաստաթղթերը ստորագրվում են Վարչության նախագահի կամ նրա տեղակալի կողմից՝ մեկ անդամի հետ միասին։

63. Վարչության գործերի ներքին կարգը, ինչպես և վարչության լիազորության սահմանները վորոշվում են Ընդհանուր Ժողովի կողմից հաստատված հրահանգներով։

---

## VII ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

64. Ընկերության գործերի ստուգման համար Ընդհանուր Ժողովն ընկերության անդամների մեջից մեկ տարի ժամանակով ընտրում է Վերստուգիչ Հանձնաժողով, վորը բաղկացած է

լինում 3 անդամից և 2 թեկնածուներից։

ԾԱՆՈԹ.—Վերստուգիչ Հանձնաժողովի կազմի մեջ չեն կարող մտնել Ընկերության ծառայողներն ու Վարչության անդամները.

65. Վերստուգիչ Հանձնաժողովի վրա դըրվում են հետևյալ պարտականությունները.—

ա) Անհրաժեշտության դեպքում ստուգել դրամական միջոցները, ապրանքները, գույքը, հաշվետվության և հաշվապահության ճիշտ վարումը.

բ) Ոչ պակաս, քան տարին մեկ անգամ մանրամասն ստուգման յենթարկել Ընկերության ամբողջ գործունեությունը.

գ) Ընկերության հաշվետվության, նախահաշվի և տնտեսական ծրագրի աշխատանքների վերաբերյալ Ընդհանուր Ժողովին յեզրակացություն ներկայացնելը.

դ) Իր տարեկան գործունեության մասին հաշվետվություն ներկայացնելու Ընդհանուր Ժողովին և կատարելու նրա այլ հանձնարարությունները։

յե) Վարչության վրա տրված բողոքների քննումը.

66. Վերստուգիչ Հանձնաժողովի զեկուցումներն ու յեզրակացությունները նախքան Ընդհանուր Ժողովին ներկայացվելը, հաղորդվում են Վարչության։



67. Յեթե պարզվի Վարչության աշխատանքների սխալ ընթացքը և նրա վրա տրված բողոքի ճշտությունը, Վերստուգիչ Հանձնաժողովը ցուցմունքներ է անում Վարչության։ Իսկ եական անկարգություններ, չարամիտ գործունեություն հայտնաբերվելու դեպքում Վերստուգիչ Հանձաժողովն Ընդհանուր Ժողով է հրավիրում։

68. Սահմանված ժամկետին Վարչությունը հաշվետվություն չկազմելու դեպքում, Վերստուգիչ Հանձնաժողովն այդպիսին հանձնարարում է կազմելու այլ անձանց Վարչության անդամների հաշվին։

69. Իսկ Վերստուգիչ Հանձնաժողովի վերաբերյալ բողոքներն Ընդհանուր Ժողովին տըրվում են ոչ այլ կերպ, քան Վերստուգիչ Հանձնաժողովի միջնցով։ Վերստուգիչ Հանձնաժողովը տրված բողոքներն իր յեզրակացությամբ զեկուցում է առաջիկա Ընդհանուր Ժողովին։

---

## VIII ՀԱՇՎԵՏԱՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

70. Ընկերությունում պարտավորեցուցիչ կերպով պահվում են գրքեր, ուր գրանցվում են.—

ա) Ընկերության ամբողջ շրջանառության յելքն ու մուտքը և դրամարկղի կանխիկ գումարը.

բ) Յուրաքանչյուր առանձին անդամի,

նույնպես և հիմնարկությունների, կոոպերատիվ կազմակերպությունների և մասնավոր անձանց հետ Ընկերության ունեցած հաշիվները.

դ) Պաշարի և մթերքների հաշիվները, շնչավոր և անշունչ ինվենտարի ու Ընկերության այլ գույքերի հաշիվներ:

### Հաշվետվությունների մասին

71. Ընկերության հաշվետու տարին համարվում է ................................ .

................................ մինչև ................................

Առաջին հաշվետու տարին համարվում է Ընկերության բացման որից մինչև ................................

72. Անցած տարվա համար Ընկերությունը կազմում է տարեկան մանրամասն հաշվետվություն, վորը պետք է արտահայտի՝ Ընկերության գործունեության վերաբերյալ բոլոր անհրաժեշտ տվյալները և մասնավորապես՝ հաշվեկշիռը, դրամագլուխների հաշիվը, վնասների և օգուտների հաշիվը, մուտքն ու յելքը և Ընկերության շրջանառության մնացորդները,—յուրաքանչյուր տեսակի շրջանառության առթիվ առանձին, ինչպես և Ընկերության անդամների և Ընկերության պարտավորությունների համար նրանց վրա ընկնող պատասխանատվության ընդհանուր գումարի վերաբերյալ տեղեկությունները:



73. Տարեկան հաշվետվությունը պետք է պատրաստվի և ստորագրվի Վարչության ու Վերստուգիչ Հանձնաժողովի անդամների կողմից վոչ ուշ, քան Ընդհանուր ժողով հրավիրելուց յերկու շաբաթ առաջ:

---

## IX ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

74. Ընկերությունը դադարում է գործելուց.—

ա) Ընկերության անդամների Ընդհանուր ժողովի վորոշմամբ.

բ) Համապատասխան Գործադիր Կոմիտեյի վորոշմամբ,—յեթե Ընկերությունը շեղվում է կանոնադրությունից կամ յեթե նրա գործունեությունը հակասում է պետության շահերին և ընկերության անդամների թիվը 10-ից պակաս լինելու դեպքում.

75. 74-րդ հոդվածում ցույց տրված դեպքերում Վարչությունը պարտավոր է անմիջապես հրավիրել Ընկերության անդամների ընդհանուր ժողով՝ Ընկ. լուծարքման կարգը վորոշելու համար:

ԾԱՆՈԹ.—Այն դեպքերում, յերբ անդամների թիվը մնում է 10-ից պակաս կամ վորևե պատճառով չի կայանում Ընդհանուր ժողովը, Վարչությունը հաղորդում է Հողբաժ-

ին՝ Ընկերությունը լուծարքելու համար նրանից թույլատվություն ստանալու:

76. Լուծարք նշանակելու մասին Ընդհանուր ժողովի վորոշումը հաղորդվում է այն հիմնարկության, ուր գրանցված է Ընկերության կանոնադրությունը, և հրապարակվում է տեղական թերթում: Լուծարքի ժամկետը չի կարող մեկ տարուց ավել լինել:

### Լուծարքային Հանձնաժողովը

77. Ընկերության գործերը լուծարքելու համար Ընդհանուր ժողովն ընտրում է յերեք հոգուց վոչ պակաս Լուծարքային Հանձնաժողով:

Ընկերության գործերի լուծարքումը կատարվում է Վարչության կողմից, յեթե Ընդհանուր ժողովի վորոշմամբ այդ պարտականությունը չի դրվի Ընկ. մյուս անդամների վրա:

78. Լուծարքային Հանձնաժողովի վրա տարածվում է Վարչության անդամների համար սահմանված կանոնները և հասցրված վնասների համար՝ պատասխանատվությունը: Լուծարքային Հանձնաժողովի գործունեության հսկում է Վերստուգիչ Հանձնաժողովը:

79. Լուծարքային Հանձնաժողովը կատարում է Ընկերության պարտավորությունները, ստանում և գանձում է նրա պահանջները և վաճառում է Ընկերության գույքը: Լուծարք-



ման Հանձնաժողովը նոր պարտավորություններ հանձն կառնի միայն այն դեպքում, յեթե նրան այդ առթիվ իրավունք է տրված Ընդհանուր ժողովի կողմից:

80. Յեթե Ընկերության գույքի արժեքը չի ծածկում նրա ունեցած պարտավորությունները, ապա Լուծարքային Հանձնաժողովն Ընկերության անդամներից գանձում է վերավճար՝ անդամների լրացուցիչ պատասխանատվության սահմաններում ու կարգով, վորպիսին նշված է կանոնադրության մեջ:

81. Ընկերության անդամներին փայավճարը վերադարձվում է Ընկերության բոլոր պարտքերը մարելուց հետո: Ընկերության վիճելի գործերի և պարտքերի վերաբերյալ գումարները, վորոնց ժամկետը չի լրացել—առանձնացվում և պահ է տրվում Կոոպերատիվ Միության:

Այդ հոդվածի կանոնները խախտելու համար Լուծարքային Հանձնաժողովի անդամները պատասխանատու յեն ինչպես Ընկերության, նույնպես և պահանջատերերի առաջ: Պատասխանատու յեն նաև Վերստուգիչ Հանձնաժողովի անդամները, յեթե նրանք հայտնաբերեն այդ խախտումները և գրավոր հայտարարություն չտան:

82. Ընկերության պարտքերը վճարելուց և փայավճարները վերադարձնելուց հետո մնա-

ցած գույքն ու դրամագլուխները Լուծարքային Հանձնաժողովը՝ համաձայն Ընդհանուր ժողովի ցուցմունքին հանձնում է կոոպերատիվ և ընդհանուր օգտագործման կարիքներին։

83. Լուծարքն ավարտվելուց հետո Լուծարքային Հանձնաժողովը վոչ ուշ, քան մեկ ամիս հետո հաշվետվություն է կազմում իր աշխատանքների մասին։ Հաշվետվությունը Վերստուգիչ Հանձնաժողովի յեզրակացությամբ ներկայացվում է Ընդհանուր ժողովի հաստատման։

Հաշվետվության հաստատումից հետո, Լուծարքային Հանձնաժողովը հաղորդում է գրանցող մարմնին և հանձնում է նրան Ընկերության գրքերը, գործերն ու փաստաթղթերը։

84. Յեթե Լուծարքային Հանձնաժողովի հաշվետվությունը հաստատելու համար Ընկ. անդամների չներկայանալու պատճառով Ընդհանուր ժողովը չկայանա, ապա Լուծարքային Հանձնաժողովն իր հաշվետվությունը ներկայացնում է գրանցող մարմնի հաստատման։

---

## X. ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒՄՆ ՈՒ ԼՐԱՑՈՒՄԸ

85. Ընդհանուր ժողովը կարող է փոփոխել և լրացնել Ընկ. ընդունած կանոնադրու-



թյունը։ Այս մասին Վարչությունն անմիջապես հաղորդում է գրանցող մարմնին։ Փոփոխությունների ու լրացումները ուժի մեջ են մտնում հաստատվելուց հետո միայն։

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԳՐԱՌԱՊ. № 1792 (Բ) ՏԻՐԱԺ 1000
ՀԱՅՊՈԼԻԳՐԱՖԻ 2-ՐԴ ՏՊ. ՊԱՏ. № 2449

ՀՀ Ազգային գրադարան
NL0208196

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР